

բարձուները և երեամիսանը դեռ չեն գտնել համախոհ, ուստի Առաջնորդի հրամանը մինչև այսօր մնում է անկատար, իսկ ուսումնարանի շինութիւնը այնչափ վնասուել է և խանգարուել որ մի տարուց յետոյ անկարելի կլինի շաբանակել նորա մէջ ուսումը:

Տեսնելով ուսումնարանի այսպիսի խեղճ զրութիւնը և ի նկատի ունենալով Առաջնորդի երկու հրամանազրութիւնը, ես առաձին զրութիւնով. ի 23 սեպտ. անցեալ 1872 ամի № 1 առաջարկեցի երեցի ուսումնարանի հատարել գոնեա մասնաւոր կարկատանքը փոխելով տանիքի վերայ կոտրատած կղմինտրները որ խափանուի անձրւի ջրի կաթիլը, իր կատարելով իմ առաջարկութիւնը՝ պ. Ամիրիսանեանցը տնօրինել էր փոխել 20-40 կղմինտր, այն ինչ հարկաւոր էր փոխել 1000 և աւելի հատ:

Սինօդն Ա. Էջմիածնի իմանալով իմ յայտարութիւնից Սղնախի սուրբ Սահակեան ուսումնարանի ողորմելի զրութիւնը՝ ունի շուտով առնել արժանաւոր տնօրինութիւն կարեոր բարեկարգութիւն տալու համար նոյն ուսումնարանին:

Աւարտելով այստեղ մեր վերահասութեան բովանդակութիւնը և նորա հետ միասին և մեր յօդուածը, աւելորդ ենք համարում առնել որ և իցե տեսակ խորհրդածութիւն, այլ բաւականանումնք մի անգամ դարձեալ կրկնել սրբազն Պօղոս Առաքեալի խօսքը թէ Ի՞չ որ Խեղանցն առջի Քնիշուն յանդիքնեւ, ոչ և այլոյ էր իշխան...

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՎՅՑ ԱԱՅԱՄԵԱՆ.

ՆՈՒԷՐ ԵՒ ՓԻՄԵ ՏԻԿՆՈՉ.

Վաղարշապատու Ա. Գայիանեան Օրիորդաց Աւումնարանի Հոգաբարձութիւնը, ստանալով այս օրերս Կ. Պօլսեցի Համեստափայլ Տիկին Եւփիմէ Մազլումնանցից (որ է քոյր մեր Վեհափառ Հայրապետի) տարեկան նուիրաբերութիւնը 400 ռ. արժ. փասն սոյն 1875 ամի, եւ մի Կ. Պօլսեցի աղքատէր Պարտնից նոյնպէս 400 ռ. արժ. միանուադ նուէր յօդուտ նոյն

ուսումնարանի, մեպուն պարտաւորութիւն է համարում իւր հրապարակական շնորհակալութիւն մասուցանել նոցա, եւ մինապանդ բարեպաշտութիւն Տիկին Եւփիմէ Մազլումնանցին, որն լինելով սկզբնական պատճառ բացման այս ուսումնարանի, իրբեւ բարերարութիւն եւ միանգամայն Հոգաբարձութիւնի, միշտ հոգացել է մայրական խնամրով եւ յաճախ այցելութեամբ ոչ միայն ուսումնարանի նիւթեաւոր ապահովութեան վերայ, այլ եւ նորա ծաղկման եւ յատաշադիմութեան վերայ: Արդ իսկ լինելով Կ. Պօլսեմ անմնական տկարութեան պատճառով, չ պակասայնուում նոյն ուսումնարանից իւր իմասմակալութիւնը եւ նեռաւոր տեղից:

Տեսուչ Ա. Գայիանեան Օրիորդաց  
ուսումնարանի Վաղարշապատու  
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՎՅՑ ԱԱՅԱՄԵԱՆ

Է 28 Հ-Ր-Դ 1875 -Դ.

Է Ա. Էջմ-Ճ-Շ:

ՎԻՃԱԿԱԾԻՆ ԴՊՐՈՑ ՅԱՂԵՔՍՍՆԴՐԱՊՈՒ

Աղերսանդրապոյ Հոգեւոր Պարոցը, բարեպաշտ եւ Աղքատէր Հոգաբարձուաց հետ, Փոխանտրդ Արժ, Առիքա վարդապետ Պարզեանցի եռանդուն չանիսք, վիճակին կարի անհրաժեշտ կարուտութիւնէն ստիպեալ, համաձայն Թեմական դպրոցաց, Վիճակային Դպրոցի Պոխարկելոյ կանոնադրութիւնը վեհ. Հայրապետ ամենայն Հայոց համաստեց հանգերծ օրնութեան եւ բաշակարական կոնվուկա:

Սոցա պատվիր նախանձիլի եւ անփոնց ջանքը եւ եկեղեցաշահ նպաստակը հանգերծ շնորհակալութեամբ կրովեմբ, եւ կմագթեմբ կարողութիւն, յաջորդութիւն, եւ յարաւեւ արդինասորութիւն:

ՕՐԻՈՐԴԱՑ ԱԱՅԱՄԵԱՆ ՆԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Սոյնպէս հանգերծ շնորհակալութեամբ կնադորդ դեմք մեր սիրելի Աղքայնոց Աղերսանդրապոյ երկուսն Հոգեւոր Պարոցաց համայն վարժապետաց եւ տեսչաց այն անծովը, զի տեղույն աղքատիկ օրիորդաց մուպերական Ձշուառ վիճակին կարեկցելով, ըստիպեալ յազգափրութիւնէ, տեղույն Ա. Աստուածածին եկեղեցւոյ նովանաւորութեան ներքեւ բացուելի Սա-

հականոյշ օրիորդաց ծիրական դպրոցին մէջ օրի դասախուռաթիւնը անելոյ համար խնդիր մատուցին, ուստի եւ վեհ. Հայրապետ պիտի ընդունելով նայա առաջարկութիւն, հաստատեց առաջարկիալ ծրագիրը:

—————  
ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ \*

Հայրաքրատթիւն:— Մէջուսէ և Փռանքի երկամսեայ դատապարտութիւն:— Երեսփ:— Ընթեան երկանուսին ամական:— Վանէն և զրաբառութիւնը և մասնութիւնը:— Զրիավորժ և թոշակաւոր աշակերտներ:— Մալաթիոյ մէջ:— Սննդեան Ալիքն Քերին:— 10000 սովոր:— Ազգ՝ պարանց հանգանակութեան հաշիւ:— Այ առակ:— Սամաթիա:— Մանմանապրութեան վերաբնիչ յանձնաժողով:

Անբաղաքազիտական հեռատեսութեամբ Պատրիարքը մեծ պակասութիւն ըրաւ Յունաց հետ բազում տարիներէ ի վեր շարունակուած տեսակցութեան մի յարաքրառութիւն զագարեցնելով, որ Ծնունդին և Զատկին կպատահէին:

Մեծ տասներուն այնպիսի տեսակցութեանց փախազարձ երթևեկութիւնները որչափի և իցէ քաղաքական նշանակութենէն զուրկ չեին և ոչ անօգուտ երբեմն մեր ազգին ալ:

Յիրաւի Յունաց եկեղեցականաց տգեստ մասին կրօնամոլութիւնը և տեղ տեղ Քրիստոսի կամաց և հրամանաց բոլորովին ներհակ երթեմն կատարուած զեղծումները վիշտ կպատճառեն մեզ, սակայն նոյն իսկ ինքեանք յոյները երբ զգացած էին այն ատելի գործերնին և հետզհետէ ուղղուելու ձգտումներ կցուցնէին, մեզ կիցացելը մեր Ս. կրօնի ազատամութիւնը և վսեմութիւնը վահան ունենալ, և միշտ վեհանձնութեամբ ամէցնել զանոնք. ի հարկէ շուտով անոնք ալ նախապաշտրեալ կրօնամոլութիւններէն պիտի հեռանան:

Ենչուշտ պատրիարքները երբ կմիանան, իրենց ժողովրդոց և նոյն իսկ իրենց համար շատ լաւ գործեր կարող են արդիւնաւորել: Բայց միմեանց

հակառակելով՝ աւելի վեասներ կը աղեն և պիտի քաղաքն:

Եղանակ թէ կրկին շարունակուեին յարաքրառութիւնները, և այն ժամանակ աւելի դիւրին է չետզնետէ յօյները ամաչեցնել իրենց կրօնամոլ գործոց համար և յետս նահնջելու հարկադրել աշատամիտ սկզբունքներով:

\* \* \*

Յունալար 17 էն Մէջ՝ շարիվարի. Հանդէօրն և փետրվարի 7 էն Փռանքը լրագիրը երկ—երկու աշմի միջոցով զատապարտուեցան:

Ա. Պատրիարքի նկատմամբ՝ առաջինը միրահ. պատկեր մը տպած, և վերջինը կարինէն զըրուած մի նամակ՝ որ անցնալ և ներկայ անհաճոյ ընթացիցն վերաց կպանդատէր, հրառարակած էր:

\* \* \*

Գոհ եմք որ Երեսփ. Ընդհանուր ծողով օրինաւոր ընթացքով կյարառուեէ, և բաւականին յաջող է:

Առ այժմ վտանգներու երկիւղները փարուտեցնուած:

\* \* \*

Ազգ. Արշութիւն տեղւոյս զթալով Գեր. Սեմեան Յօհ. Եպիսկոպոսի զառամեալ վիճակին վերաց, որ չէ կարող մի պաշտօն վարել, որոշեց ամսական երկու ոսկի (լիբա) կեզրոնական սընտուկէն տալու, և սկսաւ տալ:

Սցյանկէս ազգային մը ամսական երկու ոսկի, և Ս. Պատրիարքն ալ մէն մի ոսկի պիտի տան, ինչպէս հրատարակած է Փռանք:

\* \* \*

Վանէն բազմաթիւ երեւելի ազգայնոց ստորագրութիւններով բողոքադիր մի խրկուած է Պատրիարքարանին՝ իմանալով որ յանհրաւի զրաբարտութեամբը և մատնութեամբը Պօղոս վարդապետ աբորտած է, մինչդեռ նորա որ աստիճան Օսմ. կայսեր. կառավարութեան հաւատարիմ ըրբար երևելի փաստերով ալ կը հաստատեն:

Եյս զործը ծանր կերպարանք պիտի առնէն հարծես մենք մեր ձեռքբերով մեր տունը կը հարուածնեք և կը կործաննեք: Ի՞նչ ասեմ այն

(\*) Անցեալ Փետրվարի ամսագրոյ թերթից անձկութիւն դժող Հարկադրեց մեր Պատուական երկու գրաւթիւններն են:

Խարդար մենք մեր ձեռքբերով մեր տունը կը հարուածնեք և կը կործաննեք: